Փաստաբանական դպրոց

ք. Երևան, Զաքիյան 2, 3-րդ հարկ
Հեռ. (+37498) 655601
(+37496) 200625
(+37455) 320052

Արդարադատության ակադեմիա

ք.Երևան, Փիրումյանների 9
Հեռ. (+37460) 46 00 79
(+37460) 46 00 87

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ք.Երևան <<7>> մարտի 2015թ.

Արդարադատության ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա)՝ ի դեմս Ակադեմիայի ռեկտոր Ռուբեն Մելիքյանի, մի կողմից, և Փաստաբանական դպրոցը (այսուհետ՝ Դպրոց)՝ ի դեմս Դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանի, մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր):

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի <<Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին>> 2012 թվականի հունիսի 6-ի թիվ 96-Ա կարգադրությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի <<Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու>> թիվ 303-Ն որոշումը,

Նկատի առնելով այն, որ Կողմերը կիսում են նմանատիպ առաքելություններ և ցանկանում են համագործակցել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում,

Նպատակ ունենալով կատարելագործել Ակադեմիայի և Դպրոցի ունկնդիրների (դատավորների, դատախազների, փաստաբանների, դատավորների և դատախազների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց, փաստաբանական դպրոցի ունկնդիրների) մասնագիտական պատրաստման և վերապատրաստման ընթացակարգերը, սերտացնել ունկնդիրների միջև համագործակցությունը և շփումը՝ համատեղ դասընթացների և այլ համատեղ միջոցառումների կազմակերպման և իրականացման միջոցով՝ Կողմերը համաձայնեցին հետևյալի մասին.

1. Հուշագրի նպատակները

1.1. Հուշագրի նպատակներն են՝

1.1.1. հաստատել ակտիվ և արդյունավետ համագործակցության, ինչպես նաև փորձի փոխանակման Կողմերի պատրաստակամությունը.

1.1.2. նպաստել արդարադատության համակարգում ներգրավված մասնագետների որակավորման բարձրացմանը՝ լավագույն միջազգային փորձին համապատասխան.

1.1.3. նպաստել արդարադատության համակարգի մասնակիցների միջև կառուցողական և շարունակական համագործակցությանը:

2. Համագործակցության առարկան

2.1. Կողմերը համաձայնվում են՝

2.1.1. կազմակերպել համատեղ դասընթացներ, գիտական միջոցառումներ (համատեղ քննարկումներ (կլոր սեղաններ), գիտաժողովներ, սեմինարներ և այլն),

2.1.2. համագործակցել հեռաուսուցման հարթակի ներդրման, ինչպես նաև հեռաուսուցման համատեղ դասընթացների կազմակերպման նպատակով,

2.1.3. միմյանց օժանդակել գիտական նյութերի, գրականության, ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ տեղեկատվության փոխանակման հարցում,

2.1.4. կողմերի համատեղ դասընթացների անցկացումը ապահովել համատեղ մշակված և հաստատված ուսումնական նյութերով,

2.1.5. համատեղ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում իրականացնել գիտական հետազոտություններ,

2.1.6. անհրաժեշտության դեպքում իրականացնել կադրերի փոխանակում՝ դասավանդման, հետազոտական աշխատանքների նպատակներով,

2.1.7. իրականացնել Ակադեմիայի և Դպրոցի միջև համաձայնեցված այլ միջոցառումներ:

2.2. Հուշագրով նախատեսված համատեղ ծրագրերի իրականացման նպատակով Կողմերը կարող են ստեղծել հասարակական հիմունքներով գործող հանձնախումբ:

3. Եզրափակիչ դրույթներ

3.1. Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

3.2. Հուշագրում Կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են փոփոխություններ կատարել: Փոփոխությունները ձևակերպվում են առանձին արձանագրություններով, որոնք ուժի մեջ կմտնեն Կողմերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների ստորագրման պահից և կազում են Հուշագրի անբաժանելի մասը:

3.3. Հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ: Հուշագրի գործողությունը դադարեցնել ցանկացող կողմը պարտավոր է մյուս կողմից այդ մասին գրավոր տեղեկացնել առնվազն երկու ամիս առաջ: Այդ դեպքում կողմերը պարտավորվում են ավարտին հասցնել մինչև պայմանագրի դադարեցումը չավարտված ծրագրերը:

3.4. Հուշագրի կատարմանն առնչվող հաղորդակցությունը կատարվում է Հուշագրում նշված Կողմերի կոնտակտային տվյալների հիման վրա:

3.5. Հուշագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Փաստաբանական դպրոցի	**Արդարադատության ակադեմիայի**
տնօրեն Սիմոն Բաբայան	**ռեկտոր Ռուբեն Մելիքյան**